ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 15-Լ

«01» 03 2023 թ.

ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության (այսուհետ նաև՝ Վարչություն) պետի պարտականությունների կատարումը Սամվել Ծերունի Հակոբյանի վրա դնելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի նոյեմբերի 7-ի N 412-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի փետրվարի 27-ի N 74-Ա հրամանը և այն, որ անհրաժեշտ է կատարել Վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Նելլի Աշրաֆյանի կողմից՝ ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Սամվել Հակոբյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Պողոսյան Արթուր - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Խաչատրյան Կամո -	ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Գևորգյան Թամարա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,
Եգանյան Անուշ -	ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի մարտի 13-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ